ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/1-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **27 -ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Թեոֆարմա իմպորտ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Վ. Մակինյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-9/1-4** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***10,980,000 (տասը միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Դավիթ Բեկի 1 թղմ, 5 տուն
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 220513330294000
ՀՎՀՀ 02522167	ՀՎՀՀ 00471216
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
_____ Ն. ՅՈԼՉՅԱՆ	_____ Վ. ՄԱԿԻՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/1-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
52.	Ատրակուրիում (ատրակուրիումի բեզիլատ), atracurium (atracurium besilate)	հատ	3000	480	1,440,000	1500	1500	
66.	Բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium	հատ	60000	41	2,460,000			60000
69.	Ցեֆտրիաքսոն, ceftriaxone	հատ	60000	118	7,080,000	40000		20000
Ընդամենը					**10,980,000**			

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/1-4 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	CPV անվանում և ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝							
				Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ.
52.	**Ատրակուրիում բեզիլատ m03ac04/**Ատրակուրիում (ատրակուրիումի բեզիլատ), atracurium (atracurium besilate)	33631370/503	1,440,000	720,000	720,000	1,440,000	1,440,000	1,440,000	1,440,000	1,440,000	1,440,000
66.	**Բենզիլպենիցիլինի աղեր j01ce01/**Բենզիլպենիցիլինի նատրիում, benzylpenicillin sodium/	33651114/501	2,460,000	0	0	0	0	0	2,460,000	2,460,000	2,460,000
69.	**Ցեֆտրիաքսոն j01dd04/**Ցեֆտրիաքսոն, ceftriaxone/	33651118/501	7,080,000	4,720,000	4,720,000	4,720,000	4,720,000	4,720,000	7,080,000	7,080,000	7,080,000
Ընդամենը			**10,980,000**	**5,440,000**	**5,440,000**	**6,160,000**	**6,160,000**	**6,160,000**	**10,980,000**	**10,980,000**	**10,980,000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ զինված ուժերի գլխավոր վարչության պետ

Մ.Տ.

Ա. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՄԱԿԻՆՅԱՆ